ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բյուրեղավանի քաղաքային համայնքի հաշվետու համայնքային ժողովի

13 սեպտեմբերի 2011թ. **քաղաք Բյուրեղավան**

2011 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ Բյուրեղավան համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Ասոյան Ավետիք, Բաղդասարյան Հայկազ, Դանիելյան Ավագ, Եղիազարյան Արթիկ, Հայրապետյան Վոլոդյա, Հարությունյան Սլավիկ, Մարգարյան Գայանե, Շառյան Արգամ, Պետրոսյան Թագուհի:

Համայնքի ղեկավարի աշխատակզմից՝ Եղիազարյան Միշա – համայնքի ղեկավարի տեղակալ, Ալեքսանյան Լաուրա – աշխատակազմի քարտուղար, Դավթյան Բորիկ – համայնքի ղեկավարի խորհրդական, Օսիպյան Մարինա - համայնքի ղեկավարի օգնական, Պողոսյան Լիդիա - գլխավոր մասնագետ – ֆինանսիստ, Գաբրիելյան Խաչատուր - գլխավոր մասնագետ, Ասատրյան Շուշիկ – առաջատար մասնագետ – հաշվապահ, Բաղդասարյան Մարինե - առաջատար մասնագետ, Մարկոսյան Նինա - առաջատար մասնագետ, Դանիլյան Դանիել – առաջին կարգի մասնագետ, Կնյազյան Սոնա - առաջին կարգի մասնագետ:

Համայնքի բնակիչներ, <<Կոտայք>> ամսագրի խմբագրության աշխատակից:

ՕՐԱԿԱՐԳ

Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:

ԼՍԵՑԻՆ

Համայնքի ղեկավար Հ. Բալասյանին

Նա մասնավորապես ներկայացրեց 2010թվականի երկրորդ կիսամյակից մինչև 2011թվականի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում կատարված հետևյալ հիմնական աշխատանքները ՝ հիմնանորոգվել է մշակույթի տան տանիքը (11968.3 հազ. դրամ), բակերում կառուցվել են 5 մանկական խաղահրապարակներ, շարունակվել է կառուցվել փողոցների լուսավորության համակարգը (4250.0 հազ.դրամ), կատարվել են փողոցների փոսային վերանորոգումներ (6449.3 հազ.դրամ), կատարվել են բակերի վերանորոգումներ՝

քաղաքային զբոսայգում և բակերում տեղադրվել են 24 նստարաններ, քաղաքի սանիտարական աշխատանքներն ավելի լավ կազմակերպելու նպատակով ձեռք է բերվել ջրցան մեքենա (1500.0 հազ.դրամ), կատարվել է մսուր-մանկապարտեզի շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրում (4397.5 հազ.դրամ), վերանորոգվել է 915գծ/մ. ջրագիծ, նախապատրաստական աշխատանքներ են տարվում Կոտայք փողոցի ջրագծի հիմնանորոգման համար, ընթացքի մեջ են Բյուրեղավանի մսուր-մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները, իրականացվում է ուսանողների անվճար տեղափոխումը :

Հ. Բալասյանը նշեց, որ քաղաքապետարանի պաշտոնական կայքը /byureghavan.am/ և քաղաքում առկա հանրային իրազեկման ցուցատախտակները նպաստում են համայնքի ղեկավարի, ավագանու կատարած աշխատանքների, ընդունած որոշումների մասին հանրության տեղեկացվածությանը և ՏԻՄ-ի գործունեության թափանցիկությանը:

Ելույթ ունեցան Մարիամ Գրիգորյանը և ավագանու անդամ Թագուհի Պետրոսյանը

Նրանք բնակչության անունից շնորհակալություն հայտնեցին քաղաքապետին և նշեցին , որ Բյուրեղավանի քաղաքային համայնքում տեսանելի բարեփոխումներ կան, քաղաքապետի կատարված աշխատանքների արդյունքում քաղաքը լուսավորվել է, զբոսայգին դարձել է գեղեցիկ ու հաճելի հանգստավայր թե ծերերի, թե երեխաների ու երիտասարդների համար:

ՈՐՈՇՎԵՑ

Հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Միջոցներ ձեռնարկել մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները չդադարեցնելու և շարունակական աշխատանքների արդյունքում գործը 2012թվականին ավարտին հասցնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ